1700-ամյակին ընդառաջ

Կառուցվող և վերակառուցվող վանքեր

«Եկայք շինեսցուք...»

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների կազմակերպման եկեղեցական հանձնաժողովը իր կատարելիք գործերը քննարկելիս, միշտ էլ առաջնություն է տալիս այն աշխատանքներին, որոնք պետք է կատարվեն ոչ թե մեկ օրվա կամ պահի համար, այլ ունենան մնայուն արժեք: Այդ առումով առանձնանում են շինարարական և կառուցողական այն աշխատանքները, որոնք ուղղվելու են վանքերի և եկեղեցիների վերանորոգման, միաժամանակ նորերի կառուցման նվիրական գործին:

Վերանորոգելով ու կառուցելով է, որ կրկին կյանք ու կենդանություն են ստանալու հայոց դարավոր ուխտատեղիներն ու աղոթատեղիները, որոնք մեր աստվածասեր ու աստվածապաշտ նախնիները կառուցեցին Հայաստանի տարբեր գավառներում ու նահանգներում, գյուղերում ու քաղաքներում, այնտեղից իրենց աղոթքը երկինք առաքեցին՝ խնդրելով Աստծուն, որ հողը բերրի դարձնի, երկիրը խաղաղ պահի, ջարը հեռու վանի: Դրանք մեզ մնացին իբրև թանկագին ժառանգություն: Իսկ ինչպե՞ս: Ցավոք, շատերը կիսաքանդ կամ կիսավեր՝ խարխլված բնական աղետներից կամ տարիների դրոշմից: Այո, մենք այսօր, մեր ժողովրդի հոգևոր վերազարթոնքի այս սքանչելի պահին, նաև սրբազան տարեդարձի առիթով, պարտավոր ենք կրկին վեր խոյացնել եկեղեցիների խոնարհված գմբեթները, որպեսզի նրանց մամռոտ պատերին փարվեն մեր հոգեպարար երգի մեղեդիները, որպեսզի մենք ու նաև հաջորդ սերունդները Աստծո սուրբ տունը գանք՝ աղոթելու, երկրպագելու Տիրոջը: Այս վերանորոգվելով պիտի բացվեն շատ տաճարների դռներ, որտեղ մեր նորոգյալ հոգիների աղոթքը պարուրվելու է ազնիվ խնկաբույրով, հայոց սրբացած հայրապետների և նահատակ սրբերի հիշատակների ոգեկոչման մրմունջներով՝ Աստծուն փոխանցելով նաև մեր սերը, նվիրումը, հույսն ու երազները:

«Եկայք շինեսցուք...»:

Վերանորոգվում ու կառուցվում են Հայաստանի վանքերն ու եկեղեցիները

Հայաստանի քրիստոնեացման 1700-ամյակի տարեդարձը համազգային է, իսկ այն արժանավայել դիմավորել պատրաստվում են և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքի գաղթօջախներում բնակվող մեր հայրենակիցները: Այդ նպատակով Հայաստանում այժմ ընթանում են վանքերի ու եկեղեցիների վերանորոգման և կառուցման լայնածավալ աշխատանքներ՝ հովանավորությամբ Ամենայն Հայոց Գարեգին Առաջին Հայրապետի: Իսկ 1700-ամյակի առթիվ ծրագրված է վերանորոգել 40 վանք և եկեղեցի, կառուցել նորերը: Վերոհիշյալ թվերը հուշում են նաև, որ հապաղելու ժամանակ չկա: Այս մտահոգությամբ են աշխատում 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Գերաշնորհ Տ. Մեսրոպ արք. Աշճյանը և ճարտարապետ Հրաչյա Գասպարյանը՝ ձգտելով առավելագույնս օգտվել ամառվա ընձեռած հնարավորություններից և աշխատանքները կազմակերպել ավելի արդյունավետ: Ասենք, որ այսօր Հայաստանում աշխատում են նաև Սփյուռքից կամավոր ժամանած մեր երիտասարդ հայրենակիցները: Մինչ ներկայացնելը, թե այժմ որ վանքերում ու եկեղեցիներում են սկսվել

ու ընթանում շինարարական աշխատանքները. 1700-ամյակի կազմակերպման հանձնաժողովը երախտիքի ու գնահատանքի խոսք է ուղղում Արգենտինայում, Կանադայում, Իտալիայում և այլ երկրներում ապրող այն բարերարներին, որոնց սրտագին նվիրատվություններով հնարավոր եղավ սկսել Հայաստանի վանքերի ու եկեղեցիների վերանորոգման և կառուցման աշխատանքները:

Այժմ վերանորոգվում և կառուցվում են.

1. Սաղմոսավանքի վանական համալիրը, ուր այս տարի նորոգվում է գավիթը: Աշխատանքներին իրենց նպաստն են բերել «Երկիր և Մշակույթ»-ի կամավորները՝ Ամերիկայից, Ֆրանսիայից, Բելգիայից և Եգիպտոսից: Սաղմոսավանքի նորոգության ծախսերը հոգվում են «Երկիր և Մշակույթ»-կազմակերպության կողմից:

Հայտնենք նաև, որ Կանադայի թեմի «Առաքելություն դեպի Հայաստան» 25 մարդուց բաղկացած խումբը այս տարվա հուլիս 10-ից օգոստոս 10-ի ընթացքում պետք է ընդգրկվի Խոր Վիրապի վանքի բարեզարդման ինչպես նաև Արարատի շրջանում կատարվելիք այլ աշխատանքներում:

2. Բյուրականի Ս. Հովհաննես, Սևանի Ս. Հովհաննես, Հովհաննավանքի Ս. Կաթողիկե, Տաթևի Ս. Պողոս-Պետրոս, Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցիները:

3. Սանահին - Այս տարի վերանորոգվելու է գրատունը և զանգակատունը: Աշխատանքները հովանավորում են Հերի և Լիլիան Մարգարյանները՝ Մոնրեալից:

4. Մուղնու Ս. Գևորգ եկեղեցի - Նորոգությունը կատարվում է շնորհիվ Մեսրոպ արք. Աշճյանի քահանայական ձեռնադրության 35 ամյակի առթիվ կատարված նվիրատվության:

5. Կարբի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցի - Այստեղ կառուցվելու է նաև նոր հովվատունը, 5000 ք/մ տարածությամբ մի նոր գբոսայգի, ուր կտեղադրվի Մեսրոպ Թաղիադյանի կիսանդրին (գործ՝ Թոմ Գեորգյանի): Նույն գբոսայգում պիտի զետեղվի նաև արգենտինահայ ազգային բարերար Պողոս Արզումանյանի և նրա քրոջ՝ Սիրանույշ Մեծատուրյան-Արզումանյանի որբությունը խորհրդանշող բրոնզյա հուշարձանը՝ իբրև հարգանքի յուրօրինակ տուրք Արմեն և Սիրանույշ Մեծատուրյաններին և Արգենտինայում հանրածանոթ «Պողոս Արզումանյան» հիմնարկության ներկայացուցիչներին, որոնց օգնությամբ իրականանում են եկեղեցու վերանորոգման աշխատանքները: Կարբի գյուղի նոր և նորոգյալ կառույցների բացումը և եկեղեցու վերընծայումը տեղի կունենա օգոստոսի 22-ին՝ նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

6. Նորավանք - Ամաղու Նորավանքի մեջ արդեն իսկ վերանորոգվել է Բուրթելաշեն երկհարկ եկեղեցին, որ Օրբելյանների տոհմական գերեզմանն է և, երկար-երկար տարիներից հետո առաջին անգամ պիտի երևա իր ամբողջական գեղեցկությամբ: Նորավանքի այս եկեղեցու վերանորոգությունը ստանձնել են Տեր և Տիկին Տիգրան և Դիանա Հաճեթյանները՝ Մոնրեալից, որոնց նվիրատվությամբ կբարեզարդվի նաև եկեղեցու շրջակայքը: Նորոգված Բուրթելաշեն տաճարի և Նորավանքի պաշտոնական բացման արարողությունը տեղի պիտի ունենա 1999 թ. ապրիլի 25-ին, Երուսաղեմ-Հայաստան ուխտագնացության ավարտին:

7. Կառուցվում է Վայոց Ձորի Վայք քաղաքի Ս. Տրդատ եկեղեցին՝ բարերարությամբ Դետրոյտում ապրող Գալուստ և Էմմա Սողոյան ամուսինների: Շրջկենտրոնում Ս. Տրդատը միակ եկեղեցին կլինի, ինչպես նաև խորհրդանիշը նոր կառուցվելիք եկեղեցիների:

Հուլիսի 22-ին, չորեքշաբթի օրը, Իջևանում տեղի ունեցավ նորաշեն մեկ ուրիշ եկեղեցու օծումը՝ Ս. Ներսես անվամբ, որի նվիրատուներն են Տեր և Տիկին Գևորգ և Պերճուհի Ներսեսյանները՝ Բոստոնից:

Որքա՜ն գեղեցիկ է հնչում աղոթքը, որ սովոր ենք լսելու Մեծի Պահոց հսկումի օրերին. «Երանի եկեղեցի շինողաց...»:

Ինչպես տեսանք, նորոգությունների հետ միասին Հայաստանի տարբեր թեմերում կառուցվում են բազմաթիվ նոր եկեղեցիներ: Դրանց նպաստում են ոչ միայն Սփյուռքի հայ բարերարները, այլ նաև հայաստանյան, ովքեր իրենց արդար վաստակից բաժին են հանում կառուցելու Աստծո տները: Այսօր չենք կարող չգնահատել նրանց աստվածահաճո գործը: Այո, նրանք գիտեն, որ Աստուծո բաժինը Աստծուն պետք է տալ: Սարտունիի Թուխ Մանուկից մինչև Սռինք և մինչև Երևանի մեջ բարձրացող բազմաթիվ եկեղեցիները:

Ի վերջո ասենք, որ շուտով նորոգության աշխատանքներ կսկսվեն Հառիճավանքի, Աշտարակի Ս. Մարինե, Օշականի Քառասնից Մանկանց և Գեղարդ վանքերում:

Թող օրհնյալ լինեն բոլոր բարերարները, ճարտարապետները, բանվորները, քարգործները և բոլոր նրանք, ովքեր իրենց սիրով և սրտով վեր կբարձրացնեն Աստծու տաճարները: